

ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆԻ ՀԻՆԳ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՎԱՀՐԱՄ ՄԱՆԿՈՒՆՈՒՆ

Կոմպոզիտոր Մակար Եկմալյանի ստորև ղեկավարած նամակներից շորսը նախապես հրապարակվել են «Պատմա-բանասիրական» հանդեսում (1972, № 3): Այդ հրապարակումը, ցավոք, խոշոր թերություններով է: Առանձնապես տուժել են 4-րդ և 5-րդ նամակները (հրապարակվածում՝ 3-րդ և 4-րդ), որոնց առանձին հատվածները փոխադարձաբար տեղափոխված են, ընդ որում կցման տեղերի տեքստում անցումը հարթեցնող փոփոխություններ են արված:

Այդ դրությունը անհրաժեշտություն առաջ բերեց հիշյալ 4-րդ և 5-րդ նամակները վերստին հրապարակել իրենց բնական տեքստով և դրանց ավելացնել ստորև ղեկավարած, անտիպ մնացած 2-րդը, որ վերաբերում է Մ. Եկմալյանին Պետերբուրգ ուղարկելու նպատակին, այնտեղ անցկացրած սկզբնական շրջանին և մյուս նամակների բովանդակությունը լրիվ ընկալելու համար կարևոր է:

Եկմալյանի՝ 1876—78 թթ. Վ. Մանկունուն գրած նամակներն իրենց բովանդակությամբ մի հաջորդական շարք են կազմում: Այդ նկատի ունենալով, վերահրապարակելու ձեռնարկելիս, հարմար գտնվեց այդ շարքից դուրս շթողնել նաև 1-ին և 3-րդ նամակները, թեև առաջին հրապարակման ընթացքում սրանց տեքստերում զգալի փոփոխություններ տեղի չեն ունեցել: Այս հինգ նամակների, ինչպես և 1972-ին հրապարակված 6-րդի (1899 թ.) ու Ա. Բժշկյանի երաժշտության դասագրքի մասին Եկմալյանի գրավոր կարծիքի բնագրերը պահվում են Փարիզի Նուպարյան մատենադարանում, լուսապատճենները՝ Նրևանի Գրականության և արվեստի թանգարանում:

Վերահրապարակվող նամակներին մենք անդրադարձել ենք Մ. Եկմալյանի մասին մեր հոդվածում («Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 1), որտեղ օգտագործված այլ նոր նյութերի հետ այս նամակները զգալիորեն լրացնում են Եկմալյանի կենսագրությունը և ուղղում որոշ ախալ պատկերացումներ: Դրանք շատ բան են ասում հայ ականավոր երաժշտի անձնավորության մասին, բացահայտում այն դժվարությունները, որ նա հաղթահարել է, երբ էջմիածնից ուղարկվել է Պետերբուրգ այնտեղ կամ Մոսկվայում որպես դպիր աշխատելու, և երբ աստիճանաբար ամրապնդվել է կոնսերվատորիա մտնելու համար իր հնարավորությունների նկատմամբ նրա ունեցած հավատը:

Նամակներում Եկմալյանի շարահյուսությունը հեռու է կատարյալ լինելուց (ու, թերևս, հենց դրանից են բխել առաջին հրապարակման թերությունները): Դա բացատրվում է ոչ միայն գրելու մեջ նրա անփորձությունով, այլև հոգեբանական-հուզական հանգամանքներով: Մանկունի յուրաքանչյուր (իր նախկին հոգեհայրը) խիստ քաջվելով, Եկմալյանը միաժամանակ միշտ նրանից խնդրողի և նրան դանդաղողի աննպաստ դերում է եղել: Պետերբուրգից գրված նամակներից ոչ մեկը սովորական «բարևագիր» չէ, ոչ էլ հերթական «հաշվետվություն»: Նամակագիրը իր կյանքում էջմիածնից ոտքը դուրս չդրած՝ միանգամից ընկել է մայրաքաղաք: Նա **ռուսերեն** չգիտեր և արդեն այդ պատճառով ճնշված էր զգում իրեն: Քաղաքում թանկություն էր, նա չէր կարողանում կազմակերպել իր կենցաղը, շարունակ խնդրում էր «ռուսիկն» ավելացնել: Սննդից կտրելով, դրամ էր խնայում, հատկացնում երաժշտության տեսության մասնավոր պարապմունքներին, որպեսզի իրագործի իր իսկ դրած նպատակը՝ մեկ տարուց հետո էջմիածին վերադառնալով կարողանա Մայր Աթոռին օգտակար լինել: Պետերբուրգի հայ հոգևոր «կառավարությունը» նրան չէր օժանդակում, «ցուրտ» կերպով էր նայում նրա ապագա «արհեստին»...

Չնայած իրենց անհարթ շարահյուսությանը (ի դեպ՝ տեղ-տեղ էլ «անհարթություններ») բխում են զավառական առօրյա խոսակցական ոճից), այդ նամակները ընթերցողի մեջ հիասթափություն չեն հարուցում: Դրանք վաղվա օրվա նկատմամբ հուսահատության հասցնող հուզումով լեցուն (չլինի՝ թե նրա սկսած՝ առաջմ եվրոպական երաժշտության միայն տարրական տեսությունը սովորելը կիսատ մնա...) գրություններ են, և սրանից էլ են բխում լեզվական ու շարահյուսական թերությունները՝ մի բանով սկսած մի այլ բանով ավարտելը, անավարտ նախադասությունները, բառերի բացթողումները, միայն հոլովումները, վատ կետադրությունը...

Նամակները հրապարակման պատրաստելիս, ուղղագրությունը փոխելու հետ, թույլ ենք տվել խմբագրական նվազագույն շտկում՝ կետադրությունը և առողջանության նշանները լրացնե-

լով, գլխատուների գործածության անհետևողականությունը վերացնելով, երբեմն մեծ պարբերությամբ մասերի բաժանելով: Բացառիկ դեպքերում, երբ թերի գրությունը մթազնում է նախադասության բովանդակությունը, անկյունավոր փակագծերում հավելել ենք լրացուցիչ պարզաբանող բառեր: Միայն մեկ նամակում կատարել ենք մի փոքր հապավում, որը ծանոթագրված է: Նամակներին կցել ենք անհրաժեշտ, ճշգրտված ծանոթագրություններ:

Պրոֆ. Ռ. Ա. ԱՔԱՅԱՆ

1

Սրբազան Հայր,

Քանի որ մենք սբ. էջմիածնա հացով կապրինք և Նորին Վեհափառության շնորհը կվայելենք, պետք է որ նորանից մեզ հանձնած ծառայությունները ճշտիվ կատարենք և Նորին Վեհափառության ամեն մեկ ձեռնարկները մեր կարողության չափ աշխատեմք ըրածը աստիճանի մեջ սրբությամբ պահել և իբրև մի վսեմ և անմոռանալի գանձ ներկայացուցանել օտարների առաջ ևս:

Իսկ ընդհակառակն, ցավոք սրտի կնշմարեմք որ, կներեք համարձակությանս, անհավատարիմ գտնվելով ոմանք իրենց սուրբ պարտավորությանց մեջ, կհանդգնին իրենց անձնական շահուց համար արատավորել և նվաստացունել Նորին օծության վսեմ նպատակը Ձայնագրության մասին¹:

Սրբազնությունդ հրամայեցիք ինձ գավառացի աշակերտներին դաս տալ², ես կամակար հնազանդությամբ հանձնառու եղա և իմ պարտավորությունը կատարեցի և կատարելու եմ միշտ: Այդ աշակերտներից ավարտողները ո՞չ ապաքեն Սրբազնությանդ առաջ պետք է քննվին և իրենց ուսուցիչներից Սրբազնությանդ հրամանով վկայական ստանան:

Այժմ ցավոք սրտի կասեմ, որ ինձ մոտ ավարտող աշակերտք ուրիշներեն են վկայական ստանում՝ չեմ գիտեր ում հրամանով, ուրեմն ես այսուհետև ի՞նչ սրտով նոցա դաս տամ. օրինակ ասածիս՝ տփխիսեցի տղան երբոր քննվեց Սրբազնությանդ առաջ և իմ ներկայությամբ, Սրբազնությունդ նշմարեցիր իմ աշխատությունը, իսկ նա վկայականի թուղթը ստանում է Սրբազնությունիցդ և տալիս է Դավիթ սարկավազն է ստորագրում, և այս օրերը նույն Դավիթ սարկավազը և տիրացու Մելիքսեդեկը սինոդի անդամի նման մեկմեկ կնիք են շինել տվել, որին կամենում են կնքում են: Եթե այդպես լինի, հինդ կոպեկով կգրեն վկայականներ և կտան այն անպիտաններին, որոց անունը հիշատակել հարկ չէ, այն ժամանակ Վեհափառի ձեռնարկի պատիվը կցածացնեն յուրյանց օգտի համար: Եթե այսպես մնա, ինձ համար շատ դժվար կլինի դաս տալ աշակերտներին, ուստի կարող է Սրբազնությունդ հրամայել այդ տեղից ինչ որ արժանն է այն տփխիսեցի տղայի մասին, ըստ որում դա իմ աշակերտն է, և արգելել մեր դեռ աշակերտ եղբայրներին այսպիսի պարագաների մեջ անձնական կնիք գործածել, որո ծանրությամբ կարծեմ իրենց վերա բավականին ճնշումն կազդե: Սպասելով Սրբազնությանդ արդար վճռույն մնամ միշտ խոնարհ որդի Ձեր

Մակար Գրիգորյան Եփմայանց

1876 ամի 4-ն հունիսի էջմիածին

1. Նոսքը նոր հավանական ձայնագրության մասին է, որով գրի առնվել և տպագրվում էին հավանական հոգևոր երգերը, խազերի մոռացումից հետո դրանք աղավաղումից և վերջնական

Կորստից զերծ պահելու, ինչպես նաև հայ եկեղեցիներում միակերպ ժամերգություն մտցնելու նպատակով:

2. Հոգևոր երաժշտության ժողովածուները պատրաստելու և ձայնագրությունը տարածելու գործը ղեկավարում էր էջմիածնի ղիվանապետ, եպիսկոպոս Վահրամ Մանկունին: Գավառացի աշակերտները ոչ միայն իրենք պետք է սովորեին, այլև իրենց հերթին ձայնագրության գիտելիքը փոխանցեին ուրիշներին:

2

Նորին Սրբազնություն Վահրամ եպիսկոպոսի Մանկունվո

Հասնելով Պետերբուրգ հունիսի 4-ին շտապեցի Սինոդեն բերած հրամանը ներկայացնել Հոգևոր կառավարությանը և Հոգևոր կառավարությունը ներկայացրեց Հոգաբարձուին, որը պատրաստվում էր գնալ արտասահման: Հոգաբարձուն առ մի ժամանակ նշանակեց ինձ 25 մանեթ և մի սենյակ, մինչև վերադառնա արտասահմանից և որոշե իմ համար՝ կամ մնալ Պետերբուրգ, կամ՝ Մոսկվա¹:

Մի ամիս մնալուց հետո փորձեցի, տեսա որ հասարակ կերպով ապրելու համար հարկավոր է 50 մանեթ: Ուստի Հոգաբարձուի վերադարձին խնդիր տվի, թե՛ ես փորձեցի մի ամիս, <տեսա> որ բավական չէ ինձ 25 մանեթ, այլ խնդրում եմ ավելացնեք մինչև 50 մանեթ, որպեսզի կարողանամ ապրել:

Նա պատասխանեց, թե նախ՝ պետք է գնաս Մոսկվա, երկրորդ՝ 30 մանեթից ավելի չենք կարող տալ, կամենա մնա, կամենա վերադառնա, ճանապարհի երրորդ կարգի ծախքը կտանք:

Ես էլ տեսնում եմ, որ չէ կարելի 30 մանեթով ապրել, որովհետև շատ թանկություն է այստեղ, ճշմարիտը ասում եմ, հավատացե՛ք <...>²:

Խնդրում եմ մի բան անեք այդ տեղից կամ Սինոդից գրեք, մի կերպ արեք, որ իմ ռոճիկս ավելացնեն, եթե ոչ ես այստեղ քաղցած կմնան: Կամ եթե ոչինչ չի լինելու, հրամայեք վերադառնամ շուտով, քանի որ ցուրտը չի կկել:

Ահա, այժմ անհանգիստ սպասում եմ Սրբազնությանդ հրամանին՝ մնալ թե վերադառնալ: Ուրդի Ձեր

Մակար Գ<րիգորյան> Եկմալյանց

1877 ամի 26-ն հուլիսի <Պետերբուրգ>

<Հ. Գ.> Խանթարճյան Խաչատուր սարկավազը նոտա է սովորում ինձ-նից և բավական սովորել է:

1. Ինչպես հաջորդ նամակներից էլ կերևա, Եկմալյանը Սինոդի կողմից ուղարկված էր մայրաքաղաքի հայ հոգևոր կառավարության տրամադրության տակ, որպեսզի Պետերբուրգի կամ Մոսկվայի հայ եկեղեցիների դպիրներին՝ հայկական ձայնագրություն սովորեցնի:

2. Նամակի հապավված տողերում հեղինակը իր «ռոճիկի» անբավարարությունը հավաստող փաստարկներ է բերում:

3

Սրբազան Հայր,

Ինչպես խոստացած եմ Սրբազնությանդ առաջ՝ որ որչափ կարողությունս էներե աշխատավոր լինիմ դեպի <Մայր> Աթոռը, հիշելով նորա ինձ տված

հացը, սնունդը և ձրի շնորհը, ուստի չկամեցա Պետերբուրգում պարապ միջոց տնցկացնել՝ սկսեցի պատրաստել ինձ մոտ գտնված Ձայնագրյալ ժամագրքի 16 մամուլի համար ցանկ ուղիղի և սխալի՝, որը այստեղ չկարողացա դորա թվահամարները համեմատել՝ կարող եք այդտեղ համեմատել. և եթե կամիք, մյուս մամուլները ևս ուղարկեք, շուտով կպատրաստեմ:

Սրբազան Հա՛յր, աղաչում եմ շուտով մեկ պատասխան գրեիք իմ դործիս համար Սինոդի կողմից, որ գոնե մի քանի՝ ամիս բավականաչափ ուճիկ տան. սոքա եթե կամենան այստեղ էլ սովորող խումբ կպատրաստեն, Մոսկվայումն ևս <, > նույնպես <կազարյան> ճեմարանում, որի հաստատությունը՝ կարող եք տեղեկանալ տեր Հակովբ քահանայից:

Ես այս երկու անգամ է, որ նամակով կխնդրեմ Սրբազնությանդ, իսկ մի անգամ այնչափ ինձ ցավեցրին, որ ստիպվեցա հեռադիր տալ, որ շուտով մի կարգադրություն լինի: Բայց մինչև այժմ մի պատասխան չեմ ստացել: Հույս ունիմ ինչպես մինչև այժմ Սրբազնությանդ շնորհը վայելած եմ³, ալս վերջինը ևս չեք խնայիլ Պետերբուրգում հասնելով օգնության Սինոդի հրամանները⁴, որում մնամ խոնարհ որդի

Մակար Գրիգորյան եկմալյանց

1877 ամի 31-ն օգոստոսի <Պետերբուրգ>

1. Պետք է լինեի՝ «սխալի և ուղիղի»: Խոսքը տպագրվելիք «Ձայնագրեալ երգքի ժամագրոց» հատորի երաժշտական տեքստի սրբագրության մասին է:

2. Նշանակում է՝ Պետերբուրգի և Մոսկվայի հայկական եկեղեցիներում և կազարյան ճեմարանում հայկական ձայնագրությունը ուսումնասիրողների խմբեր ստեղծելու հնարավորությանը:

3. Տե՛ս հաջորդ նամակի 1-ին պարբերությունը:

4. Պետք է լինի՝ հրամաններով:

4

Նորին Սրբազնություն Տյառն Վահրամա եպիսկոպոսի Մանկունվո

Սրբազան Հա՛յր,

Բավական ժամանակե ի վեր կսպասեի գրությունցս պատասխաններին, բայց դժբախտաբար ոչ մեկի պատասխանը չստացա: Իհարկե, ոչ թե մոռցած լինելով Ձեր հոգեզավակին գրած չեք, այլ ժամանակի սուղ լինելու պատճառով գրած չեք, ուստի այս վերջին նամակիս պատասխանը հուսով կմնամ, <խնդրելով> գթառատ Հայրությունեդ նվիրել Ձեր թանկագին երկու ռուպեքը գրելու Սրբազնությանդ անառակ որդուն և նորից որդեգրությունը նորոգելու:

Ինչպես քանիցս անգամ գրած եմ թե՛ Սրբազնությանդ և թե՛ իմ ընկեր Պողոսին՝ իմ այստեղի պաշտոնին և վիճակիս վերայով, նմանապես և Սրբազան Սինոդին մեկ խնդիր՝ ոչ պատասխան ստացա և ոչ բարեկարգություն եղև վիճակիս, ի վերջո, անցրնելով խղճալի ալրուստով այս տասն ամիսը անօգուտ և անվաստակ² միանգամայն՝ ահա լրանում է շուտով տարին, և սոքա խոսք տված եմ պահել ինձ այստեղ մինչև մայիս ամիսը, այնուհետև՝ ոչ: Ես այս բանի համար տարակուսանաց մեջ կմաշվիմ, թե ինչ պետք է անեմ, ուստի մեկ աղերսանաց խնդիր ուղարկեցի Նորին Վեհափառությանը, խնդրելով Նորին օծությունեն, որ ինչպես մինչև այժմ յուր Սուրբ հովանավորության տակը եղած եմ, այժմ ևս կխնդրեմ նույն հովանավորությունեն շրջկե, այլ ինձ

համար նորից մեկ վիճակ որոշե, կամ՝ այստեղ նորից, կամ՝ մեկ ուրիշ քաղաք ուսուցչության պաշտոնի հաստատելով: Նորա համար նորից կիսնդրեմ այստեղ, որովհետև կամենում եմ, ինչպես վերը գրած եմ, հին որդեգրությունը նորոգել, որդեգրվել նորից Սրբազնությունեդ և <պայման կապել> Սուրբ էջմիածնա աթոռի հետ, այսինքն բարեխոսելով Սրբազնությունեդ նորին Վեհապետությանը, որ նորից այստեղ նշանակելով ինձ այս պաշտոնում, մի փոքր օգնություն ևս <տրվի> Սուրբ Աթոռեն. և եթե դժվար է Աթոռի համար, կարելի է Պեսարապիո վիճակեն ամսական տասն արծաթ ուղարկել մինչև մյուս մայիս:

Ես այստեղ պարապելով և կատարելագործելով եվրոպական ձայնագրությանը³, կուխտեմ առաջի Աստծո ու առաջի Սուրբ Աթոռո էջմիածնի, զինի ուսանելով վերադառնալ<լ> էջմիածին, երեք ամբողջ տարի ևս ծառայելով ուսուցչանել նոցա, որոց հարկ է իմ սովորածը: Ես արդեն սկսած և բավականաչափ սովորած եմ եվրոպական ձայնագրությունը, ափսոս կհամարիմ այսպես թերի թողնել: Ինձ միայն բավական է մի ձմեռ ևս սովորել, այնուհետև ես վստահ եմ ցույց տալու իմ աշխատանք արդյունքը:

Սրբազան Հայր, ես հուսով եմ, որ Սուրբ էջմիածնա Աթոռը չի զլանալ այսպիսի մի արդյունավոր գործի նպաստելու, որ ընդամենը հարյուր քսան արծաթ կանե: Իհարկե, այդ հարյուր քսան արծաթով էջմիածինը կունենա ժամանակին յուր Աթոռի մեջ և՛ այդ արհեստը գիտեցղներ, և՛ ինձ խեղճիս էլ պարգևած կլինի դորանով կյանք և ապրուստ: Ի վերջո, Սրբազնությանդ ազնիվ խոսք եմ տալիս, որ միամիտ լինեք այս իմ խոստացած պայմանի վերա, ես ավելի ոչինչով չեմ կարող հավատացնել: Ուրեմն՝ ավելորդ իմ երկարացնելը նամակիս և տեսակ-տեսակ խոստմունքներով լցնել<ը>:

Սրբազան Հայր,

Զգիտեմ Ձայնագրյալ ժամագիրքը և Պատարագի արարողությունը տրպալած է թե ոչ. եթե տաված է՝ շատ շնորհակալ կլինեի մեկ-մեկ օրինակ ունենալ, որովհետև «Արժան<ի> է մշակել վարձու յուրո»⁴: Ուստի սպասելով Սրբազնությանդ գթառատ նամակին, մնամ

խոնարհ ծառա Սրբազնությանդ դպիր Մակար Եկմալյանց

1878 ամի 18-ն մարտի ի Ս. Պետերբուրգ

1. էջմիածնի վանքի դպիր շենկիլերցի Պողոս Զեպեճյան, որ Եկմալյանի հետ միասին մասնակցել էր հողեղո հրգերի գրառման ու տպագրման աշխատանքներին:

2. Տվյալ դեպքում նշանակում է՝ ապարդյուն:

3. Ժամանակակից արտահայտությամբ՝ կատարելագործվելով եվրոպական ձայնագրության մեջ:

4. Գևորգ Դ կաթողիկոսի երգածից (որ, Մ. Օրմանյանի վկայությամբ՝ «ինքն ալ գեղեցիկ ձայն և նուրբ ճաշակ ուներ, կատարյալ շարականագետ էր և ձայնագրագետ երաժիշտ») Նիկողայոս Թաշճյանը, երիտասարդ դպիրների օժանդակությամբ, էջմիածնում գրի էր առել և արդեն տպագրվել էին՝ «Ձայնագրեալ երգեցողութիւնք ս. Պատարագի» (1874), «Ձայնադրեալ Շարական» (1875): Այստեղ խոսքը «Ձայնագրեալ երգք ի ժամագրոց» հատրի և Պատարագի 2-րդ՝ լրացված ու սրբազրված տպագրության մասին է, որոնք լույս տեսան, համապատասխանաբար, 1877 և 1878-ին: Պողոս առաքյալի «Թղթից» մեջբերումը ավելի քան տեղին է: Եկմալյանը, թե՛ էջմիածնում Թաշճյանի ներկայությամբ և թե՛ վերջինիս Կ. Պոլիս մեկնելուց (1875) հետո, ամենաեռանդուն մասնակցություն էր ունեցել այդ գործին: Տե՛ս նաև «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 1, էջ 29:

Նորին Սրբազնություն Տյառն Վահրամա արքեպիսկոպոսի Մանկունժո

Սրբազան Հայր,

Նախ կհամարձակիմ ի որդիական սրտե նվիրել ողջունս և սուրբ աջույդ համբույր, և երկրորդ՝ հայտնել նվաստիս շնորհակալությունը Սրբազնությանդ արած անբավ բարերարությունները, <որ> միանգամայն աշխատություն կրելով հրաման գրեցիք իմ մասին տեղվույս հոգևոր կառավարությանը, որով պարտավորեցիք Ձեր ծառային:

Ես երբեք չեմ կարող մոռանալ իմ կյանքիս մեջ թե՛ Սուրբ Էջմիածնա Աթոռի շնորհը և երախտիքը և թե՛ Նորին Վեհափառության և Ձեր Սրբազնության արած բարերարությունները: Չնայելով տասն և չորս ամիս է հեռացածս Սուրբ Աթոռեն, սակայն երբեք չեմ մոռնար և ամեն ընկալած կմտածեմ թե արդյոք կարող եմ այս իմ ստացած երախտյաց քառորդին երախտահատույց լինել: Ես բացեիբաց կխոստովանիմ Սրբազնությանդ առջև՝ իմ այստեղ գալս կամ այստեղ իմ երաժշտական ուսմամբ պարապելս բոլորն այն նպատակով, որ ժամտնակին, թե հաջողե Աստված, մի փոքր էլ ես հարկավոր լինիմ Սուրբ Աթոռին: Ես այն պատճառով կցանկայի որ ռոճիկս մի փոքր ավելանար, որպեսզի այս իմ սկսած նպատակս ի գլուխ տանեի, որովհետև բացի եվրոպական ձայնագրերի գործնական կերպով սովորելս, այլև կցանկանայի և հարկավորություն կա թե՛ սորա ձայնական մասն և թե՛ ձայներ շարադրելու մասն ևս ուսանել:

Ես միմիայն կարողանում եմ իմ կերած ճաշի ստակեն, երկու օրը մի անգամ ճաշելով, մի փոքր ավելցնել և այն էլ տալիս եմ գործնական մասին սովորելու, իսկ ձայնականի և ձայներ շարադրելու համար կարողությունես վեր է, որով ստիպված նպատակս² հետաձգվում է: Ես մի քանի անգամ ներկա եղած եմ այս երկու առարկայի դասատվության, ըստ մասնական նոցա շատ դյուրին է ինձ ուսանելու այդ առարկաները, իհարկե՝ ստակով: Սինոդեն եկած հրամանը շատ գեղեցիկ գրված էր, բայց ափսո՛ս որ սոցա պինդ և կոպիտ վարմանը չաղեց: Ինչպես երևում է, սոքա յուրյանց երեսները լվացած մարդիկ են. ամոթը կամ նախատինքը չի աղդեր:

Հրամանը եփրեմ վարդապետը տարավ Հոգաբարձուին ներկայացրեց. փոխանակ համոզական խոսքերով համոզել որ պետք է կատարած Սինոդի հրամանը, սոքա, ընդհակառակն, Հոգաբարձուին ավելի դժգոհ են Սինոդի դեմ: Հոգաբարձուն շատ համոզվող մարդ է, բայց համոզել պետք է: Այդ հրամանին պատասխանեցին այսպես. «Եկմալյանն ստանա ի տարին 540 արծաթ, ուստի Հոգաբարձուն բավական համարե նմա զայնչափ ռոճիկն»: Սոքա ինձ 540 արծաթ չեն տալիս. իսկապես տվածները ընդամենը 360 արծաթ է տալին, մնացյալը իմ բնակությանս վարձն է հաշված, որ կբնակիմ եկեղեցական մի սենյակում: Եթե Սրբազնությունդ իմանա քաղաքի այժմյան թանգությունը, կխնդաք իմ ստացած ռոճիկիս վերա:

Երկրորդ գրածին <պատասխանեցին> թե «Հոգաբարձուն չէ հանձն առլալ իրավունս և չի առնի երբեք ի կարգադրությունս եկեղեցական ծեսից և արարողությունց»: Շատ լավ. եթե եկեղեցական ծեսից կամ արարողությունց <կարգադրման իրավասու մեզ են> ճանաչում միմիայն, մեզ հրամայողը

մեր աղան է, իհարկե Աղան էլ խստիվ չէ հրամայում ուսանել⁵։ Գրած են նաև, թե ստացանք դպիրներից բացասություն։ Ինչպե՞ս կարելի է Աղան հրամայե՛լ ստորադրյալը չլսե, քանի որ Աղան ստակ է վճարում։ Այս երբե՛ք հավատալու բան չէ, այս կնշանակե՛լ ո՛չ աղան է հրամայում և ո՛չ էլ ստորադրյալը կատարում հրամանը։ Եթե այս աղաները ի սրտե են ցանկանում կատարել Վհ-հափառ կաթողիկոսի հրամանը, շատ հնար կա դպիրներին սովորեցնելու⁶, քանի որ յուրյանց ապրուստը այդ ստակովն է։

Սրբազան Հա՛յր, սպասում եմ ժամագրքի և Պատարագի արարողության օրինակներին, բայց դեռ չեմ ստանում, շատ շնորհակալ կլինեի, եթե ստանալիս⁷։

Եղյանց և Սանասարյանց շատ ցուրտ կերպով են նայում այս արհեստի վերա և շատ հեռու են մնում օգնության կողմանե⁸։

Մեծ ցավ է պատճառում յուրաքանչյուրիս սրտին լրագրաց համբավներին։ Նայելով Ճեմարանի մասին, բայց ամո՛թ այն մարդո՛ւ ճակատին, որից առաջացավ այսչափ ցավ⁹։

Մնամ Սրբազնությանդ խոնարհ ծառա և որդի

Մակար Գ<րիգորյան> Եկմալյանց

1878 ամի 14-ն հունիսի <Պետերբուրգ>

1. Եվրոպական ձայնագրերի դործնական կերպով սովորելը, բացի բուն նոտագրությունից, հավանաբար, ընդդրկում էր նաև երաժշտական դրագիտության դասընթացն ամբողջապես։ «Ձայնական մասը» սովորելու է, իսկ «Ձայնի շարագրելը»՝ հարմոնիան (ներդաշնակագիտություն)։

2. Այսինքն՝ սովորելը վերջացնելուց հետո էջմիածին վերադառնալը և այնտեղ իր սովորածը այլոց ուսուցանելով օգտակար լինելը հետաձգվում է։

3. Ըստ երևույթին՝ Սինոդից եկած հրամանում առաջարկված է եղել Պետերբուրգում ժամերգությունը վարել նորատիպ ժողովածուների համաձայն։ Դրա համար անհրաժեշտ էր, որ դպիրները վարժվեին նոր հայկական ձայնագրությանը։ Եկմալյանն իր արժանի լուման ներդրած լինելով հոգևոր երգերի վերաձայնադրման գործում, հասկանալի կերպով, անձամբ ևս շահագրգռված էր, որ նոր հրատարակություններն իրենց նպատակին ծառայեն։

4. Նախապես գրելիս է եղել՝ դպիրներին ստիպել սովորելու։

5. Տե՛ս նախորդ նամակի 4-րդ ծանոթագրությունը։

6. Տե՛ս նաև «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 1, էջ 33։

7. Հավանաբար Գևորգյան ճեմարանում տիրած պահպանողական ոգու դեմ 1878-ին տեղի ունեցած ուսանողական ելույթների վերաբերյալ մամուլի հաղորդագրությունների մասին է։ Այդ ելույթների նկատմամբ Եկմալյանի վերաբերմունքը ճշգրիտ պարզաբանող որևէ վավերագիր մեզ չի հաղորդել հայտնաբերելու։

ПЯТЬ ПИСЕМ МАКАРА ЕКМАЛЯНА К ВАГРАМУ МАНКУНИ

Проф. Р. А. АТАЯН

(Резюме)

Четыре из публикуемых и комментируемых писем М. Екмаляна прежде были напечатаны—к сожалению, с некоторыми искажениями и неточными комментариями—в «Историко-филологическом журнале» (1972, № 3). Одно письмо (№ 2) печатается впервые. Эти письма, адресованные епископу В. Манкуну—заведующему канцелярией эчмиадзинского католикосата, охватывают двухгодичный период времени от июня 1876 по июнь 1878 гг. и по своему содержанию составляют последовательный ряд. Выдающийся армянский композитор, будучи тогда еще молодым певчим эчмиадзинского собора, после того как принял деятельное участие в записи и печатании армянских духовных песен, был направлен эчмиадзинским синодом в Петербург с целью обучить певчих столичной и московской армянских церквей новоармянской нотописи, чтобы они могли исполнять вновь изданные песни. В Петербурге у Екмаляна естественно возникло желание самому учиться европейской теории музыки, с которой он еще не был знаком. В течение двухлетних частных занятий у него появилась вера в возможность поступить в консерваторию. Относящиеся к периоду, предшествовавшему консерваторской учебе, эти письма содержат существенные сведения для биографии будущего композитора: в них раскрывается образ волевого человека, сумевшего ценой больших лишений и настойчивого, кропотливого труда добиться намеченной цели.